

տալոցուածոց պտուղէն մաս մը Մտուծոյ ընծայել, և միանգամայն յիշատակ ունենալ ի Սիօն, իւր աշխատութեամբ և ծախիւք մէկ զոյգ՝ երկուք ուկէս մեթր բարձրութեամբ ոսկեղծ մեծ ու փառաւոր աշտանակներ նուիրեց Վրիստոսի Տեառն մերոյ կենսատու սուրբ Վերեղմանի դրան առջեւ դրուելու համար։ Սոյն աշտանակներուն ձեւոյն և վայելչութեան վերայ արժանաւոր գովեստ տալ չեմք համարձակիր, միայն այս չափ կ'ըսեմք որ չափուց համեմատութիւնը, դրուագաց պարզութիւնը և կանոնաւոր արուեստի ծնունդ լլցսը նոցա գեղեցկութեւ չգեղութեան նկարագիրն ու գովեստն է, որ սուրբ տեղեաց մէջ եզակի և մանաւանդ խիստ կարեւոր լինելուն համար մեծ պատիւ կը բերէ Վսեմաշուք նուիրատուին և պարծանք Մագիս։

Քանզի սուրբ Տեղեքը բրիստոնեայ ազգաց հետ ընկերակցութեամբ բաժնուած լինելուն՝ սուրբ Վերեղմանի դրան առջեւ երէք բրիստոնեայ ազգերը իրաւունք ունին երկերկու զոյգ մեծ և փոքր աշտանակներ ունենալ, մեր ունեցած առաջին աշտանակները թէ իրենց տձեւութեամբ և թէ հինցած ու խորտակուած լինելուն անպիտանացած էին, և շատոնց նորոգութեան կարեւորութիւնը զգալի եղած էր։ Բարեսէր անձինք ոմանք խօստացան և ձեռնարկեցին անգամ, բայց կամ անյաջող դիպուածներու և կամ ծախուց մեծութեան առջև կասեցան, որոց յաղթելով Վ. Վէորգ պէյ՝ յսջողեցաւ առատաձեռնութեամբ եւ բրտամբ ազգայնութեան պատիւը նորոգել և բարձրացնել օտար ազգաց մէջ։ Մհա սոյն հանգամանքներն եւս կը վսեմացնեն նուիրատուին և նուէրին արժանիքը։

Սոյն աշտանակներուն պատուանդանին ճակատը Վորգայի վայելչութեամբ հետեւեալ արձանագրութիւնը կը կարդացուին։

Նուիրեալ ի Վէորգ պէյ Ռաֆայելանէ ի յիշատակ հանգուցեալ կողակցոյն իւրոյ Լ. Ֆիթիկ Տիկնոջ։

յ. 41. 1872:

Սխաբանութիւնս երախտապարտ շնորհակալութեամբ ընդունելով սոյն յիշատակաց արժանի մեծ նուէրները, իրենց տեղը ղետեղեց և հանգուցեալ Լ. Ֆիթիկ հանրմ տիկնոջ անմահ հոգւոյն համար հանգստեան պաշտօն կատարեց, և ջերմ բարեմաղթութիւններ ըրաւ Վ. Վէորգ պէյի թանկագին կենաց երկարութեան և յաջողութեան համար։

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՆԻՔ

Մայիս 4ին Սորսոնիոյ գահաժառանգ իշխանը ընկերակցութեամբ տեղւոյս Վսեմ. Կառավարչին, Վերմանիոյ հիւպատոսին, և զորաց մեծ բաղմութեամբ քաղաքս մտաւ։ Յատկապէս մեր վանքը այցելութիւն ըրաւ եւ Ս. Պատրիարքի հետ Եպիսկոպոսաց վարժարանն եւս եկաւ և անտի գոհ սրտիւ մեկնեցաւ իւր բնակութեան տեղին։ Մայիս 8ին քաղաքէս ճամբայ ելաւ գէպ ի Ղ. Ղէստանդրիա։

— 6ին Բ. Վանէն տեղւոյս Վսեմ. Կառավարչին ուղղեալ հեռագիր մը եկաւ, որով կը ծանուցանէր Յունաց Պատրիարքին անկումը և միաբանութենէն Բրոգորիոս փոխանորդ Եպիսկոպոսին տեղապահ նշանակուելը։ Սոյն հեռագրի իմաստը պարունակող երէք

հեռագիր եւս Յոյն միաբանութիւնը
ընդունեց։ Հեռագրի եկած միջոցին
Պատրիարքը՝ որ քաղաքէն դուրս չբը-
ջագայելու ելած էր, ոստիկանութեան
պաշտօնէի մը ձեռքով, որոյ հետ ըն-
կերացած էին մի. քանի զինուորներ, ՚ի
պալատ հրաւիրուեցաւ, ուր ներկայ
էին միաբաններէն յիսուն հոգի՝ փո-
խանորդ Բրոգորիոս եպիսկոպոսին հետ,
որք նոյնպէս կանխաւ հրաւիրուած է-
ին։ Կարգացուեցաւ Բ. Գունէն եկած
հրամանագիրը, որ կ'ասէր, թէ Կիրի-
լիոս Բ. Պատրիարքը՝ որ ցարդ Ազգին
որոշմամբ եւ Տէրութեան վսեմեաց
մամբ Պատրիարք էր, այսուհետեւ
իւր պաշտօնէն դադրած է։ Սիւնայի
միջոցին Սիւրբանութեան եւս հրաման
եղաւ որ առժամանակեայ Պատրիար-
քական Տեղապահ մը որոշեն, որք ան-
միջապէս փոխանորդ Բրոգորիոս եպիս-
կոպոսը ներկայացուցին եւ ընդունուե-
ցաւ։ Տեղապահը Ա. սեմ. Կառավարչի
կողմէն պատրաստուած փառաւոր ձի-
ու մը վերայ նստած հանդերձ միաբա-
նութեամբ եւ զինուորներով ՚ի Ս. Յա-
րութիւն գնաց, ուր Սիւրբանութիւն
ուրախ սրտիւ զերար կ'ողջունէր՝ Բը-
րիստոսի Ս. Գերեզմանին հանդէպ
(Օսմանեան Բարեխիւս Կայսեր կե-
նաց եւ բարօրութեան համար բարե-
մաղթութիւններ ընելէ զինի մեծ ու-
րախութեամբ իրենց վանքը գնացին։

Իսկ Պատրիարքը պալատէն յատուկ
սրահապան զինուորներով ՚ի Պատրի-
արքարան գնաց։ Այս միջոցին Յոյն
ժողովուրդը մեծ յուզման մէջ էր. բա-
ղարիս փողոցները զինուորներով լցուած
էին խռովութիւն տեղի չունենալու
համար։ Սիւնայեւ անգամ խանութիւն-
քը Կառավարչի հրամանաւ գոցուե-
ցան։ Սիւնայի միջոցին ժողովուրդը
Բ. Գունուր հեռագրեց՝ թէ իրենց

Պատրիարքը կ'ուզեն։ Նոյն գիշերը
ժամը 10 ին Ա. սեմ. Կառավարիչը հան-
դերձ մի. քանի Յոյն եպիսկոպոսներով
պատրիարքարանի սենեակները կնքեց
եւ Պատրիարքը երկու հարիւր ձիաւոր
զօրքով Յապպէ ղրկուեցաւ, ուր դայ-
մագամին քով հսկողութեան տակ մը-
նաց մինչեւ ամսոյս 18 ին, եւ նոյն օրը
Պոլիսէն յատուկ Օսմանեան շողենաւ
մը գալով՝ ՚ի Պոլիս տարաւ Կիրիլիոս
Պատրիարքը, որոյ հետ նաև Ալեքսան-
դրոս Օ. փարգապետը։

— 8 ին Ռուսաց հիւպատոսը Ռուս
ուխտաւորաց արգելեց՝ որ այսուհե-
տեւ ոչ Յունաց վանքը երթեւեկեն,
ոչ գիշերենքը Ս. Յարութիւն մնան,
եւ ոչ Յունացմէ մոմ առնեն, եւ սպառ-
նացաւ միանգամայն, որ այս արգել-
քին դէպ գործող ուխտաւորը պիտի
աքսորէ։

— 9 ին Յունաց Սիւրբանութիւնը
քաղաքիս ամուսնացեալ Յոյն քահա-
նաներն հրաւիրելով խստիւ պատուի-
րեց, որ յետ այսորիկ իրենց յատկա-
յեալ Լիկեդեցւոյ մէջ աղօթեն եւ Կի-
րիլոս Պատրիարքին անունը բնաւ չը
յիշատակեն. բայց նոքա ցարդ իրենց
Լիկեդեցւոյ դուռն անգամ բացած չեն,
այլ ժողովրդեան հետ մէկ տեղ Ռու-
սաց Լիկեդեցին կ'երթան։ Սիւրբա-
նութիւնը՝ Պատրիարքին կողմնակից
Եպիսկոպոսաց եւ Արքայապետաց մաս-
նաւոր ապաշխարութիւններ սահմա-
նեց։

— Ս. Ուխտիս միաբաններէն Գեր-
Լըբմիս նորապսակ Եպիսկոպոսը, որ
չուրջ չորս տարի Ռուսաստան կը
գտնուէր այցելութեան պաշտօնիւ,
ամսոյս 12 ին յուրախութիւն համայն
Սիւրբանութեան ողջամբ Ս. Լթուս
ժամանեց, ուր արժանաւայել պսոռ-
ուով ընդունուեցաւ։

— 16 ին Յոյն Սիւրբանութիւնը ըստ


ողգային հրահանգի նոր Պատրիարքի
ընտրութեան համար քուէարկութիւն
ըրաւ, սակայն քուէարկութենէ ա-
ռաջ այնպէս որոշած էր, որ Արկղոս
Պատրիարքը հրաժարեցնելու համար
որոնք որ բանտարկուեցան, նոցա մի-
այն քուէ տրուի: Քուէարկութիւնը
կատարելով Ռոմֆորիտ տեղապահ ե-
պիսկոպոսը Պատրիարք ընտրուեցաւ,
և որոյ արդիւնքը 'ի Պօլիս Աղգային
ժողովին հեռագրեցին անտի Ռ. Վը-
րան հաղորդուելով վաւերացման լու-
րը 19 ին Սիսիւսթեան հեռագրու-
ուեցաւ:

— 20 ին ցաւալի դէպք մը տեղի
ունեցաւ: Վիշերը ժամը 7 ին 18 տա-
րեկան Հրէայ մը, որ քաղաքէս դուրս
կը բնակէր, իւր զոքանչը զինքը իւր
սենեակը կը կանչէ, երիտասարդը դու-
ռը բանալով դուրս կ'ելլէ, ուր երկու
գիւղացի կը տեսնէ. ասանցմէ մին հը-
րացանը Հրէին վերայ պարպելով ան-
միջապէս աներեւոյթ կը լինին: Վըն-
տակը երիտասարդին որովայնը կը ծա-
կէ և չարաչար կը վիրաւորէ: Հրէին
ազգականները թէ՛ հրացանի և թէ՛
վիրաւորելոյն ձայնէն դուրս կ'ելլեն,
կ'իմանան եղելութիւնը, ուստի խկոյն
քննութեան համար քաղաքի բժիշկը
կը կանչեն. յետոյ գժբաղդ երիտա-
սարդը Սոլիտի հիւանդանոցը կը փո-
խադրեն, որ 23 ին մեռաւ: Տակաւին
ոճրագործք չեն յայտնուած:

— Արդէն վերն ասացինք Ռուսաց
Հիւսիսաստիին Ռուս ուխտաւորաց
Յունաց վանքերը երթեւեկութիւնը
արգիլելը, ուստի իրենց Ս. Ննդեան
առթիւ, որ ամսոյս 25 ին էր, յատկա-
պէս խնդրեց մեր Ամեն. Ս. Պատրի-
արքէն, որ Ռուս ուխտաւորները
Բեթլէհէմ մեր վանքը իջնան, Ս. Պատ-
րիարքը Հիւսիսաստիին խնդիրը ընդու-
նեց մարդասիրական և հիւրասիրա-

կան օրինօք:

— Յոսպէի նաւահանգիստը եւ
անտի մինչև քաղաքս երկաթուղի չի.
նելու համար Անգղիացի ընկերութե
հետ Տէրութեան կնքած դաշտնց օրի-
նակները և այս մասին տրուած հրա-
մանները ներկայ ամսոյս 25 ին ընդու-
նեց տեղւոյս Առաւմարութիւնը: Յի-
շեալ ընկերութեան մէկ քանի հոգին
նոյն օրը Յոսպէ հասան և այժմ քա-
ղաքս կը գտնուին: Տակաւին ճանա-
պարհը և ծովի ջուրը չափելէ 'ի զտո-
ուրիշ բան մը չորին:



ՅԱՆԿ ՆԻԹՈՅ

- Անցած օրեր և նոր օրեր. 1:
Կարգադրութիւն առողջութեան.
5. 32. 56. 113:
Եկեղեցական վարչութիւն. 11:
Երազայոյն Արշալոյս. 17. 70.
Սեղեթիտ եպիսկոպոս Աթինայի և
Ղրիգորիտ Ստորապօլիտ Բիտտի. 20:
Նոր հրատարակութիւնք. 26. 48.
71. 96. 144.
Տնօրէնութիւն Աղգ. Վարչութե
'ի մասին կալուածական և թեմական
խնդրոց Եպիսկոպոսի. 25:
Քաղուած ճառախօսութեան Տօք-
թօր Սօթմանի. 33:
Համառօտ պատասխաններ առ ե-
կեղեցականն օրագրի և առ Փոռնջն. 40:
Հանդէս տարեգարծի նահատա-
կութեան Ս. Վարդանանց, և յառ.
վարժարանի Ս. Աթոռոյս. — Ատենա-
խօսութիւն. 42:
Եամանակագրականք. 47. 70. 96.
143. 167. 192. 215. 239. 262. 285.
Որդիք Աստուծոյ. 49-92.
Ղրութիւն Վաբրիէլ Պատրիարքի